ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ (ՄԱՍ 10)

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գլուխ 62 - Ընդհանուր դրույթներ

Գլուխ 63 - Հեղինակային իրավունք

Գլուխ 64 - Հարակից իրավունքներ

Գլուխ 65 - Գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունք

Գլուխ 66 - Բույսերի նոր սորտերի և կենդանիների նոր ցեղերի նկատմամբ իրավունքներ

Գլուխ 67 - Ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների նկատմամբ իրավունք

Գլուխ 68 - Չբացահայտված տեղեկատվությունն ապօրինի օգտագործումից պահպանելու իրավունք

Գլուխ 69 - Քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների և ծառայությունների անհատականացման միջոցներ

ԳԼՈՒԽ 62. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

*Հոդված 1100.* Մտավոր սեփականության օբյեկտները

1.Մտավոր սեփականության օբյեկտներ են մտավոր գործունեության արդյունքները եւ քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների անհատականացման միջոցները:

2. Մտավոր գործունեության արդյունքներ են`

1) գիտության, գրականության եւ արվեստի ստեղծագործությունները.

2)կատարումները, հնչյունագրերը (ֆոնոգրամաները) եւ հեռարձակող կազմակերպությունների հաղորդումները.

3)գյուտերը, օգտակար մոդելները, արդյունաբերական նմուշները.

4) սելեկցիոն նվաճումները.

5) ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաները.

6)չբացահայտված տեղեկատվությունը` ներառյալ արտադրության գաղտնիքները (նոու-հաու):

3.Քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների անհատականացման միջոցներ են`

1) ֆիրմային անվանումները.

2) ապրանքային նշանները (սպասարկման նշանները).

3) աշխարհագրական նշումները եւ ապրանքի ծագման տեղանունները:

4.Սույն օրենսգրքով եւ այլ օրենքներով նախատեսված դեպքերում մտավոր սեփականության օբյեկտներ կարող են լինել մտավոր գործունեության այլ արդյունքներ եւ քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների ու ծառայությունների անհատականացման այլ միջոցներ:

(1100-րդ հոդվածը փոփ. 25.09.02 ՀՕ-413-Ն օրենք)

*Հոդված 1101.* Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների ծագման հիմքերը

1.Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքները ծագում են դրանց ստեղծման փաստի ուժով կամ լիազորված պետական մարմնի կողմից սույն օրենսգրքով կամ այլ օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով` այդ օբյեկտներին իրավական պահպանություն տրամադրելու հետեւանքով:
2.Չբացահայտված տեղեկատվությանն իրավական պահպանություն տրամադրելու պայմանները սահմանվում են օրենքով:

*Հոդված 1102.* Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ անձնական ոչ գույքային եւ գույքային իրավունքները

1. Մտավոր գործունեության արդյունքների հեղինակին են պատկանում այդ արդյունքների նկատմամբ անձնական ոչ գույքային եւ գույքային իրավունքները:

2.Անձնական ոչ գույքային իրավունքները հեղինակին են պատկանում անկախ նրա գույքային իրավունքներից եւ պահպանվում են մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ նրա գույքային իրավունքներն այլ անձի անցնելիս:

*Հոդված 1103.* Հեղինակության իրավունք

1. Մտավոր գործունեության արդյունքի հեղինակի իրավունքը (հեղինակության իրավունքը) անձնական ոչ գույքային իրավունք է եւ կարող է պատկանել միայն այն անձին, ում ստեղծագործական աշխատանքով ստեղծվել է մտավոր գործունեության արդյունքը:

2.Հեղինակության իրավունքն անօտարելի ու անփոխանցելի է եւ գործում է անժամկետ:

3.Եթե արդյունքն ստեղծվել է երկու կամ ավելի անձանց համատեղ ստեղծագործական աշխատանքով, նրանք համարվում են համահեղինակներ:

*Հոդված 1104.* Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ բացառիկ իրավունքները

1.Մտավոր գործունեության արդյունքների կամ քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների եւ ծառայությունների անհատականացման միջոցների (այսուհետ` անհատականացման միջոցներ) նկատմամբ գույքային իրավունքների տիրապետողը մտավոր սեփականության այդ օբյեկտն իր հայեցողությամբ ցանկացած ձեւով եւ եղանակով օրինաչափ օգտագործելու բացառիկ իրավունք ունի:

2.Ուրիշ անձանց կողմից մտավոր սեփականության այն օբյեկտների օգտագործումը, որոնց նկատմամբ բացառիկ իրավունքը պատկանում է դրանց իրավատիրոջը, թույլատրվում է միայն վերջինիս համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

3.Մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ բացառիկ իրավունքի տիրապետողն իրավունք ունի լրիվ կամ մասնակիորեն այլ անձի փոխանցել այդ իրավունքը, նրան թույլատրել օգտագործելու եւ տնօրինելու այդ օբյեկտը, եթե դա չի հակասում սույն օրենսգրքի եւ այլ օրենքների կանոններին:

4.Բացառիկ իրավունքների սահմանափակումները` ներառյալ մտավոր սեփականության օբյեկտի օգտագործման իրավունքն այլ անձանց տրամադրելու միջոցով, այդ իրավունքներն անվավեր ճանաչելն ու դրանց դադարեցնելը (չեղյալ հայտարարելը) թույլատրվում են սույն օրենսգրքով եւ այլ օրենքներով նախատեսված դեպքերում, սահմաններում ու կարգով, պայմանով, որ դրանք վնաս չպատճառեն մտավոր սեփականության օբյեկտների բնականոն օգտագործմանը եւ անհիմն չոտնահարեն հեղինակների իրավունքները` հաշվի առնելով երրորդ անձանց օրինական շահերը:

(1104 հոդվածի 4-րդ կետը լրաց. 07.02.00 ՀՕ-29 օրենք)

*Հոդված 1105.* Մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ իրավունքներն այլ անձի փոխանցելը

1.Մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ բացառիկ իրավունքների տիրապետողը կարող է իրեն պատկանող գույքային իրավունքները պայմանագրով լրիվ կամ մասնակիորեն փոխանցել այլ անձի: Գույքային իրավունքները կարող են ժառանգաբար համապարփակ իրավահաջորդության կարգով կամ իրավատեր իրավաբանական անձի վերակազմակերպման հետեւանքով անցնել այլ անձի, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով կամ այլ օրենքով:

2.Գույքային իրավունքների փոխանցումը պայմանագրով եւ դրանց անցումը համապարփակ իրավահաջորդության կարգով չեն հանգեցնում հեղինակության իրավունքի եւ

այլ անօտարելի ու անփոխանցելի անձնական ոչ գույքային իրավունքների փոխանցման կամ սահմանափակման: Նման իրավունքները փոխանցելու կամ սահմանափակելու մասին պայմանագրի պայմաններն առոչինչ են, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքի:

3.Պայմանագրով փոխանցվող բացառիկ իրավունքները պետք է որոշվեն դրանով: Պայմանագրում որպես օտարելի չնշված իրավունքները ենթադրվում են չփոխանցված, եթե այլ բան ապացուցված չէ:

(1105-րդ հոդ. փոփ. 04.12.01 ՀՕ-270 օրենք)

*Հոդված 1106.* Լիցենզային պայմանագիր

1.Լիցենզային պայմանագրով մտավոր գործունեության արդյունքի կամ անհատականացման միջոցի նկատմամբ բացառիկ իրավունք ունեցող կողմը (լիցենզատուն) մյուս կողմին (լիցենզառուին) թույլատրում է օգտագործել մտավոր սեփականության համապատասխան օբյեկտը:

2.Լիցենզային պայմանագիրը ենթադրվում է հատուցելի: Լիցենզային պայմանագրում պետք է սահմանվեն վարձատրության չափը եւ (կամ) այն որոշելու կարգն ու դրա վճարման ժամկետները:

3.Լիցենզային պայմանագիրը պետք է սահմանի տրամադրվող իրավունքները, դրանք օգտագործելու սահմանները եւ ժամկետները:

4.Լիցենզային պայմանագրով լիցենզառուին կարող են տրամադրվել՝

1)մտավոր սեփականության օբյեկտի օգտագործման իրավունք՝ պահպանելով այն օգտագործելու եւ այլ անձանց թույլտվություն տալու լիցենզատուի իրավունքը (հասարակ, ոչ բացառիկ լիցենզիա).

2)մտավոր սեփականության օբյեկտի օգտագործման իրավունք՝ պահպանելով այն օգտագործելու լիցենզատուի իրավունքը, սակայն, առանց այլ անձանց թույլտվություն տալու իրավունքի (բացառիկ լիցենզիա).

3) օրենքով թույլատրվող լիցենզիայի այլ տեսակներ:

Եթե այլ բան նախատեսված չէ լիցենզային պայմանագրով, լիցենզիան ենթադրվում է հասարակ (ոչ բացառիկ):

5. Լիցենզառուի կողմից մտավոր սեփականության օբյեկտի օգտագործման իրավունքն այլ անձի տրամադրելու մասին պայմանագիրը ենթալիցենզային պայմանագիր է: Լիցենզառուն իրավունք ունի ենթալիցենզային պայմանագիր կնքել միայն լիցենզային պայմանագրով նախատեսված դեպքերում:

Լիցենզառուն պատասխանատվություն է կրում լիցենզատուի առջեւ ենթալիցենզառուի գործողությունների համար, եթե այլ բան նախատեսված չէ լիցենզային պայմանագրով:

*Հոդված 1107.* Մտավոր գործունեության արդյունքներ ստեղծելու եւ օգտագործելու պայմանագիր

1.Հեղինակը կարող է ստանձնել ապագայում ստեղծագործություն, գյուտ կամ մտավոր գործունեության այլ արդյունք ստեղծելու եւ իր գործատու չհամարվող պատվիրատուին այդ արդյունքն օգտագործելու բացառիկ իրավունք տրամադրելու պարտավորություն:

2.Սույն հոդվածի 1-ին կետում նախատեսված պայմանագիրը պետք է սահմանի ստեղծվելիք մտավոր գործունեության արդյունքի բնույթը, ինչպես նաեւ այն օգտագործելու նպատակները կամ եղանակները:

3.Հեղինակի կողմից ապագայում ստեղծվելիք մտավոր գործունեության ցանկացած արդյունքն օգտագործելու բացառիկ իրավունքը որեւէ անձի տրամադրելու մասին հեղինակին պարտադրող պայմանագիրն առոչինչ է:

4.Որոշակի տեսակի կամ որոշակի բնագավառում ապագայում մտավոր գործունեության արդյունքներ ստեղծելու՝ հեղինակի իրավունքները սահմանափակող պայմանագրի պայմաններն առոչինչ են:

*Հոդված 1108.* Բացառիկ իրավունքը եւ սեփականության իրավունքը

Մտավոր գործունեության արդյունքի կամ անհատականացման միջոցի նկատմամբ բացառիկ իրավունքը գոյություն ունի անկախ այն նյութական օբյեկտի նկատմամբ

սեփականության իրավունքից, որում արտահայտված է նման արդյունքը կամ անհատականացման միջոցը:

*Հոդված 1109.* Բացառիկ իրավունքի գործողության ժամկետը

Մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ բացառիկ իրավունքը գործում է սույն օրենսգրքով կամ այլ օրենքներով նախատեսված ժամկետում:

*Հոդված 1110.* Բացառիկ իրավունքների պաշտպանության եղանակները

1.Բացառիկ իրավունքների պաշտպանությունն իրականացվում է սույն օրենսգրքի 14 հոդվածով նախատեսված եղանակներով: Բացառիկ իրավունքների պաշտպանությունը կարող է իրականացվել նաեւ՝

1) բացառիկ իրավունքների խախտման համար հիմք ծառայած եւ նման խախտման արդյունքում ստեղծված նյութական օբյեկտների առգրավմամբ.

2) թույլ տրված խախտման վերաբերյալ պարտադիր հրապարակմամբ՝ դրանում ներառելով տեղեկություններ այն մասին, թե ում է պատկանում խախտված իրավունքը, ինչպես նաեւ թույլ տրված խախտման վերաբերյալ իրավախախտողի հաշվին՝ դատական վճռի ամբողջությամբ կամ մասնակիորեն պարտադիր հրապարակմամբ՝ իրավատիրոջ նշած Հայաստանի Հանրապետությունում գործող զանգվածային լրատվամիջոցում.

3) օրենքով նախատեսված այլ եղանակներով:

2.Մտավոր գործունեության արդյունքների եւ անհատականացման միջոցների օգտագործման պայմանագրերը խախտվելու դեպքում կիրառվում են պարտավորությունների խախտման համար պատասխանատվության մասին ընդհանուր կանոնները ( գլուխ 26):

(1110-րդ հոդվածը փոփ. 15.06.06 ՀՕ-143-Ն օրենք)

ԳԼՈՒԽ 63. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

*Հոդված 1111.* Հեղինակային իրավունքի օբյեկտները

1.Հեղինակային իրավունքը տարածվում է ստեղծագործական գործունեության արդյունք համարվող գիտության, գրականության եւ արվեստի ստեղծագործությունների վրա՝ անկախ ստեղծագործության նշանակությունից ու արժանիքներից, ինչպես նաեւ այն արտահայտելու եղանակից:

2.Ստեղծագործությունը պետք է արտահայտվի բանավոր, գրավոր կամ այն ընկալելու հնարավորությունը թույլատրող այլ օբյեկտիվ ձեւով:

3.Գրավոր կամ այլ կերպ նյութական կրիչի (ձեռագրի, մեքենագրի, նոտագրի, տեխնիկական միջոցների օգնությամբ ամրակայված՝ ներառյալ ձայնագրությամբ կամ տեսագրությամբ արտահայտված, երկչափ կամ ծավալային-տարածքային ձեւով պատկերի վրա ամրագրված եւ այլն) վրա արտահայտված ստեղծագործությունը համարվում է օբյեկտիվ ձեւ ունեցող՝ անկախ երրորդ անձանց համար այն մատչելի լինելուց:

4.Նյութական կրիչի վրա չարտահայտված բանավոր կամ այլ ստեղծագործությունը համարվում է օբյեկտիվ ձեւ ունեցող, եթե այն մատչելի է դարձել երրորդ անձանց ընկալման համար (հրապարակային արտասանություն, հրապարակային կատարում եւ այլն):

5.Հեղինակային իրավունքը տարածվում է ինչպես հրապարակված, այնպես էլ չհրապարակված ստեղծագործությունների վրա:

6.Հեղինակային իրավունքը չի տարածվում գիտական հայտնագործությունների, գաղափարների, սկզբունքների, մեթոդների, ընթացակարգերի, տեսակետների, համակարգերի, արարողակարգերի, գիտական տեսությունների, մաթեմատիկական բանաձեւերի, վիճակագրական դիագրամների, խաղի կանոնների վրա, եթե անգամ դրանք արտահայտված, նկարագրված, բացահայտված, լուսաբանված են ստեղծագործություններում:

(1111-րդ հոդվածը փոփ. 15.06.06 ՀՕ-143-Ն օրենք)

*Հոդված 1112.* Հեղինակային իրավունքի օբյեկտների տեսակները

Հեղինակային իրավունքի օբյեկտներ են՝

1) գրական (գրական-գեղարվեստական, գիտական, ուսումնական, հրապարակախոսական եւ այլ) ստեղծագործությունները.

2) դրամատիկական եւ սցենարային ստեղծագործությունները.
3) տեքստով եւ առանց տեքստի երաժշտական ստեղծագործությունները.
4) երաժշտական դրամատիկական ստեղծագործությունները.
5) պարարվեստի ստեղծագործությունները եւ մնջախաղերը.
6)տեսալսողական ստեղծագործությունները (կինոֆիլմերը, հեռուստաֆիլմերը եւ տեսաֆիլմերը, տեսասլայդային ֆիլմերը, դիաֆիլմերը եւ այլ կինո, հեռուստատեսային եւ տեսաստեղծագործությունները), ռադիոստեղծագործությունները.
7) գեղանկարչության, քանդակագործության, գրաֆիկայի, դիզայնի եւ կերպարվեստի այլ ստեղծագործությունները.
8) դեկորատիվ-կիրառական արվեստի եւ բեմական գրաֆիկայի ստեղծագործությունները.
9)ճարտարապետության, քաղաքաշինության եւ այգեպուրակային արվեստի ստեղծագործությունները.
10)լուսանկարչական ստեղծագործությունները եւ լուսանկարչությանը նմանօրինակ եղանակներով ստացված ստեղծագործությունները.
11)աշխարհագրությանը, տոպոգրաֆիային եւ այլ գիտություններին վերաբերող աշխարհագրական, երկրաբանական ու այլ քարտեզները, նախագծերը, էսքիզները եւ պլաստիկ ստեղծագործությունները.
12) համակարգչային ծրագրերը.
13) տառատեսակները.
14)սույն օրենսգրքի 1111 հոդվածով սահմանված պահանջներին բավարարող այլ ստեղծագործությունները:
(1112-րդ հոդվածը փոփ. 15.06.06 ՀՕ-143-Ն օրենք)

*Հոդված 1113.* Ստեղծագործության մասերը եւ ածանցյալ ստեղծագործությունները
1. Հեղինակային իրավունքի օբյեկտ են՝ սույն օրենսգրքի 1111 հոդվածով սահմանված պահանջները բավարարող ստեղծագործությունների մասերը, դրանց անվանումները եւ ածանցյալ ստեղծագործությունները:
2. Ածանցյալ ստեղծագործություններ են՝
1)այլ ստեղծագործությունների վերամշակումները (մշակումները, անոտացիաները, ռեֆերատները, ամփոփումները, տեսությունները, բեմականացումները, դաշնակումները եւ գիտության, գրականության ու արվեստի այլ նմանատիպ ստեղծագործությունները ).
2) թարգմանությունները.
3)ժողովածուները (հանրագիտարանները, անթոլոգիաները), տվյալների բազաները եւ իրենցից ըստ նյութերի ընտրության կամ տեղաբաշխման ստեղծագործական աշխատանքի արդյունք ներկայացնող այլ հավաքածո ստեղծագործությունները:
3.Ածանցյալ ստեղծագործությունները պահպանվում են հեղինակային իրավունքով՝ անկախ այն ստեղծագործության հեղինակային իրավունքի օբյեկտ լինելու հանգամանքից, որի վրա դրանք հիմնված են կամ որը ներառում են:
(1113-րդ հոդվածը փոփ. 15.06.06 ՀՕ-143-Ն օրենք)

*Հոդված 1114.* Հեղինակային իրավունքի օբյեկտ չհամարվող ստեղծագործությունները
Հեղինակային իրավունքի օբյեկտ չեն՝
1) պաշտոնական փաստաթղթերը (օրենքները, որոշումները, վճիռները եւ այլն), ինչպես նաեւ դրանց պաշտոնական թարգմանությունները.
2)պաշտոնական խորհրդանիշները եւ նշանները (դրոշները, զինանշանները, շքանշանները, դրամանիշները եւ այլն).
3) ժողովրդական բանահյուսության եւ արվեստի ստեղծագործությունները.
4)օրվա նորությունների կամ ընթացիկ իրադարձությունների մասին մամլո տեղեկատվության բնույթ ունեցող սովորական հաղորդումները.
5)առանց մարդու ստեղծագործական գործունեության՝ տեխնիկական միջոցների օգնությամբ ստացված արդյունքները.
6) քաղաքական ելույթները, դատավարության ընթացքում արտասանված ճառերը:
(1114-րդ հոդվածը փոփ. 15.06.06 ՀՕ-143-Ն օրենք)

*Հոդված 1115.* Պաշտոնական փաստաթղթերի, խորհրդանիշների եւ նշանների նախագծերի նկատմամբ իրավունքները

1. Պաշտոնական փաստաթղթերի, խորհրդանիշների կամ նշանների նախագծի նկատմամբ հեղինակության իրավունքը պատկանում է նախագիծ ստեղծած անձին (մշակողին):

2. Պաշտոնական փաստաթղթերի, խորհրդանիշների եւ նշանների նախագծեր մշակողներն իրավունք ունեն հրապարակել նախագիծը, եթե նախագիծը մշակելու հանձնարարությունը տվող մարմինն այն չի արգելում: Նախագիծը հրապարակելիս մշակողներն իրավունք ունեն նշել իրենց անունը:

3. Իրավասու մարմինը պաշտոնական փաստաթուղթ նախապատրաստելու նպատակով կարող է նախագիծն օգտագործել առանց մշակողի համաձայնության, եթե նախագիծը հրապարակել կամ համապատասխան մարմին է ուղարկել մշակողը:

4.Նախագծի հիման վրա պաշտոնական փաստաթղթեր, խորհրդանիշներ եւ նշաններ նախապատրաստելիս պաշտոնական փաստաթուղթը, խորհրդանիշը կամ նշանը նախապատրաստող մարմնի հայեցողությամբ նախագծում կարող են կատարվել լրացումներ եւ փոփոխություններ:

5.Իրավասու մարմնի կողմից հավանության արժանանալու դեպքում նախագիծը կարող է օգտագործվել առանց մշակողի անունը նշելու:

*Հոդված 1116.* Հեղինակային իրավունքի ծագումը: Հեղինակության կանխավարկածը

1. Գիտության, գրականության կամ արվեստի ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը ծագում է այն ստեղծելու փաստի ուժով: Հեղինակային իրավունքի ծագման համար չի պահանջվում ստեղծագործության գրանցում կամ որեւէ այլ ձեւականություն:

2.Հեղինակ է ճանաչվում այն անձը, ում անունը, որպես հեղինակ, նշված է ստեղծագործության վրա, կամ ում անունը որպես հեղինակ նշված է ստեղծագործությունը հրապարակելիս, կամ ում անունը որպես հեղինակ նշված է գույքային իրավունքները կոլեկտիվ հիմունքներով կառավարող համապատասխան կազմակերպությունում կամ նոտարի մոտ կամ օրենքով համապատասխան լիազորություն ունեցող այլ կազմակերպություններում ի պահ հանձնված ստեղծագործության օրինակի վրա, քանի դեռ հակառակն ապացուցված չէ: Սույն դրույթը կիրառվում է նաեւ այն դեպքերում, երբ այդ անունը կեղծանուն է, եւ կեղծանունով հանդես եկող հեղինակի անձը կասկած չի հարուցում:

3.Ստեղծագործությունն անանուն կամ կեղծանվամբ լույս ընծայելիս (բացառությամբ այն դեպքի, երբ հեղինակի կեղծանունը որեւէ կասկած չի հարուցում նրա անձի ով լինելու մասին) լույս ընծայողը, որի անունը կամ անվանումը նշված է ստեղծագործության վրա, այլ ապացույցների բացակայության դեպքում, համարվում է հեղինակի ներկայացուցիչը եւ իրավունք ունի պաշտպանել հեղինակի իրավունքներն ու ապահովել դրանց իրականացումը: Այս դրույթը գործում է այնքան ժամանակ, մինչեւ նման ստեղծագործության հեղինակը կբացահայտի իր անձը եւ կհայտարարի իր հեղինակության մասին:

(1116-րդ հոդվածը փոփ. 15.06.06 ՀՕ-143-Ն օրենք)

*Հոդված 1117.* Համահեղինակություն

1.Երկու կամ ավելի քաղաքացիների համատեղ ստեղծագործական աշխատանքով ստեղծված ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը համահեղինակներին է պատկանում համատեղ՝ անկախ նրանից, այդ ստեղծագործությունը մեկ միասնական ամբողջությու՞ն է, թե՞ կազմված է մասերից, որոնցից յուրաքանչյուրն ունի նաեւ ինքնուրույն նշանակություն:

2.Ստեղծագործության առանձին մասը համարվում է ինքնուրույն նշանակություն ունեցող, եթե այն կարող է օգտագործվել ստեղծագործության մյուս մասերից անկախ:

3.Համահեղինակներից յուրաքանչյուրն իրավունք ունի իր հայեցողությամբ օգտագործել ստեղծագործության իր կողմից ստեղծված ինքնուրույն նշանակություն ունեցող մասը, եթե այլ բան նախատեսված չէ նրանց միջեւ կնքված պայմանագրով:

4.Համահեղինակների փոխհարաբերությունները սահմանվում են նրանց միջեւ կնքված պայմանագրով: Պայմանագրի բացակայության դեպքում համահեղինակները ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքն իրականացնում են համատեղ, իսկ եկամուտը նրանց միջեւ բաշխվում է հավասար:

5.Եթե համահեղինակների ստեղծագործությունը կազմում է մեկ անբաժանելի ամբողջություն, ապա համահեղինակներից որեւէ մեկն իրավունք չունի առանց բավարար հիմքերի արգելել մյուս համահեղինակներին՝ օգտագործելու ստեղծագործությունը:

(1117-րդ հոդվածը փոփ. 15.06.06 ՀՕ-143-Ն օրենք)

*Հոդված 1118.* Ածանցյալ ստեղծագործությունների հեղինակները

1.Ածանցյալ ստեղծագործությունների հեղինակներ են համարվում այլ անձանց ստեղծագործությունները վերամշակած անձինք՝ թարգմանիչները, ժողովածուներ եւ այլ հավաքածո ստեղծագործություններ կազմողները:

2.Ածանցյալ ստեղծագործության հեղինակն օգտվում է նման ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքից՝ վերամշակված, թարգմանված կամ հավաքածո ստեղծագործության մեջ ներառված ստեղծագործության հեղինակի իրավունքը պահպանելու պայմանով:

3.Ածանցյալ ստեղծագործություններ ստեղծողների հեղինակային իրավունքը չի խոչընդոտում այլ անձանց արդեն իսկ օգտագործված ստեղծագործությունների հիման վրա ստեղծելու իրենց ածանցյալ ստեղծագործությունները, եթե պահպանված է սույն հոդվածի 2-րդ կետի պայմանը:

(1118-րդ հոդվածը փոփ. 15.06.06 ՀՕ-143-Ն օրենք)

*Հոդված 1119.* Ստեղծագործությունների ստեղծումը կազմակերպող անձանց իրավունքները

1.Ստեղծագործությունների ստեղծումը կազմակերպող անձինք (հանրագիտարանների հրատարակիչները, ֆիլմեր պատրաստողները, պրոդյուսերները եւ այլք) չեն համարվում համապատասխան ստեղծագործությունների հեղինակներ: Սակայն, սույն օրենսգրքով եւ այլ օրենքներով սահմանված դեպքերում, նման անձինք բացառիկ իրավունքներ են ձեռք բերում այդ ստեղծագործությունների օգտագործման նկատմամբ:

2.Հանրագիտարանների, հանրագիտական բառարանների, գիտական աշխատանքների պարբերական կամ շարունակվող ժողովածուների, թերթերի, ամսագրերի եւ այլ պարբերական հրատարակությունների հրատարակիչները նման հրատարակություններն օգտագործելու բացառիկ իրավունք ունեն: Հրատարակիչն իրավունք ունի նման հրատարակության ցանկացած օգտագործման դեպքում նշել կամ պահանջել, որ նշվի իր անվանումը:

Նման հրատարակություններում ներառված ստեղծագործությունների հեղինակները պահպանում են իրենց ստեղծագործություններն օգտագործելու բացառիկ իրավունքներ՝ անկախ այն ամբողջությամբ հրատարակելու հանգամանքից, եթե այլ բան նախատեսված չէ ստեղծագործության ստեղծման պայմանագրով:

*Հոդված 1120.* Հեղինակային իրավունքի պահպանության նշանը

1.Բացառիկ գույքային իրավունքների տիրապետողն իր իրավունքների մասին ծանուցելու նպատակով կարող է օգտագործել հեղինակային իրավունքի պահպանության նշան, որը տեղադրվում է ստեղծագործության բնօրինակի կամ յուրաքանչյուր օրինակի վրա եւ կազմված է՝

1) շրջանակի մեջ վերցված լատիներեն "C" տառից.

2) բացառիկ հեղինակային իրավունքները տիրապետողի անունից (անվանումից).

3) ստեղծագործության առաջին հրատարակության տարեթվից:

2.Իրավատեր է համարվում հեղինակային իրավունքի պահպանության նշանում հիշատակված անձը, եթե այլ բան ապացուցված չէ:

(1120-րդ հոդվածը փոփ. 15.06.06 ՀՕ-143-Ն օրենք)

*Հոդված 1121.* Հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքները

1. Հեղինակի անձնական ոչ գույքային իրավունքները ապահովում են ստեղծագործության նկատմամբ նրա մտավոր եւ անձնական կապերը:

2.Հեղինակին են պատկանում ստեղծագործության նկատմամբ հետեւյալ անձնական ոչ գույքային իրավունքները՝

1) ստեղծագործության հեղինակ ճանաչվելու (հեղինակության իրավունք).

2)ստեղծագործությունն իր անվամբ, կեղծանվամբ կամ անանուն օգտագործելու կամ այդպիսի օգտագործումը թույլատրելու (հեղինակի անվան իրավունք).

3)ստեղծագործությունը հնարավոր աղավաղումներից, փոփոխություններից կամ հեղինակի համբավին կամ արժանապատվությանը վնաս հասցնող այլ ոտնձգություններից պաշտպանելու (հեղինակի համբավի եւ արժանապատվության իրավունք).

4)ստեղծագործությունը ցանկացած ձեւով առաջին անգամ հրապարակելու կամ այդ իրավունքն այլ անձի վերապահելու (հրապարակման իրավունք).

5)ստեղծագործությունը հրապարակելու մասին նախկինում ընդունած որոշումից հրաժարվելու (հետկանչի իրավունք՝ դրա հետեւանքով ստեղծագործությունն օգտագործելու իրավունք ունեցող անձանց պատճառած վնասները (ներառյալ՝ բաց թողնված օգուտը) հատուցելու պայմանով: Եթե ստեղծագործությունն արդեն իսկ լույս է ընծայվել, ապա հեղինակը պարտավոր է հրապարակայնորեն ծանուցել դրա հետկանչի մասին: Ընդ որում, նա իրավունք ունի ստեղծագործության նախկինում պատրաստված օրինակները շրջանառությունից հանելու՝ հոգալով անհրաժեշտ ծախսերը: Սույն կետի դրույթները չեն տարածվում համակարգչային ծրագրերի, տեսալսողական ստեղծագործությունների, տվյալների բազաների, ինչպես նաեւ ծառայողական ստեղծագործությունների վրա, եթե հեղինակի եւ գործատուի միջեւ կնքված պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

3.Անձնական ոչ գույքային իրավունքներն անօտարելի եւ անփոխանցելի են եւ պահպանվում են անժամկետ, բացառությամբ հետկանչի իրավունքի, որը գործում է միայն հեղինակի կյանքի ընթացքում:

*Հոդված 1122.* Ստեղծագործության անձեռնմխելիության իրավունքը
(1122-րդ հոդվածն ուժը կորցրել է 15.06.06 ՀՕ-143-Ն օրենք)

*Հոդված 1123.* Ստեղծագործությունը հրապարակելու իրավունքը
(1123-րդ հոդվածն ուժը կորցրել է 15.06.06 ՀՕ-143-Ն օրենք)

*Հոդված 1124.* Ստեղծագործությունն օգտագործելու հեղինակի իրավունքը

1.Հեղինակը բացառիկ իրավունք ունի օգտագործելու իր ստեղծագործությունը ցանկացած ձեւով եւ եղանակով, ինչպես նաեւ թույլատրելու կամ արգելելու երրորդ անձանց դրա օգտագործումը, մասնավորապես՝

1) ստեղծագործության վերարտադրումը (վերարտադրման իրավունք).

2) ստեղծագործության տարածումը (տարածման իրավունք).

3) ստեղծագործության բնօրինակը կամ օրինակները վարձույթով տալը (վարձույթով տալու իրավունք).

4)ստեղծագործության բնօրինակի կամ օրինակների փոխատվությունը (փոխատվության իրավունք).

5) ստեղծագործության թարգմանումը (թարգմանության իրավունք).

6) ստեղծագործության վերամշակումը, վերադաշնակումը, նկարազարդումը, հարմարեցումը եւ այլ ձեւերով վերափոխումը (վերափոխման իրավունք).

7) ստեղծագործության հաղորդումը հանրությանը (հանրությանը հաղորդման իրավունք).

8)ստեղծագործության հրապարակային կատարումը (հրապարակային կատարման իրավունք).

9)ստեղծագործության հրապարակային ցուցադրումը (հրապարակային ցուցադրման իրավունք).

10) ստեղծագործության հեռարձակումը (հեռարձակման իրավունք).

11)ստեղծագործության հեռարձակման միաժամանակյա կամ հետագա վերահեռարձակումը (վերահեռարձակման իրավունք).

12) ստեղծագործության հաղորդումը մալուխով կամ համանման միջոցներով (մալուխով հաղորդման իրավունք):

13)Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ ձեւերով ու եղանակներով օգտագործումը:

2. (1124-րդ հոդվածի 2-րդ կետն ուժը կորցրել է 15.06.06 ՀՕ-143-Ն օրենք)

3.Վերարտադրում է համարվում ստեղծագործության ուղղակի կամ անուղղակի, ժամանակավոր կամ մշտական ամրագրումը ցանկացած կրիչի վրա, ցանկացած միջոցներով

եւ ձեւով, ամբողջությամբ կամ մասնակի:
4.Տարածում են համարվում ստեղծագործության բնօրինակը կամ օրինակները շրջանառության մեջ դնելը վաճառքի կամ սեփականության իրավունքի փոխանցման այլ միջոցներով, ինչպես նաեւ դրանց ներմուծումը:
5.Եթե ստեղծագործության օրինակներն օտարված են օրենքով սահմանված կարգով, ապա դրանց հետագա տարածելը թույլատրվում է առանց հեղինակի համաձայնության եւ առանց վարձատրություն վճարելու, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
6.Ստեղծագործությունն օգտագործված է համարվում անկախ այն բանից այն օգտագործվել է շահույթ ստանալու նպատակով, թե առանց այդ նպատակի:
7.Ստեղծագործության (գյուտերի, այլ տեխնիկական, տնտեսական, կազմակերպչական եւ այլ որոշումների) բովանդակությունը կազմող դրույթների գործնական կիրառումը հեղինակային իրավունքի տեսանկյունից ստեղծագործության օգտագործում չէ:
(1124-րդ հոդվածը փոփ. 07.02.00 ՀՕ-29, 15.06.06 ՀՕ-143-Ն օրենքներ)

*Հոդված 1125.* Ստեղծագործությունն օգտագործելու իրավունքը տնօրինելը
1.Հեղինակը կամ այլ իրավատերը կարող է պայմանագրով՝ ներառյալ հրապարակային սակարկություններում կնքված, ստեղծագործությունն օգտագործելու իր բոլոր իրավունքները փոխանցել այլ անձի (օգտագործման իրավունքի օտարում):
2.Ստեղծագործությունն օգտագործելու իրավունքը փոխանցվում է համապարփակ իրավահաջորդության կարգով (1105 հոդվածի 1-ին կետ ):
3.Իրավատերը կարող է այլ անձի հանձնել որոշակի սահմաններում ստեղծագործությունն օգտագործելու թույլտվություն (լիցենզիա): Թույլտվությունը պահանջվում է ստեղծագործությունն ինչպես նախնական, այնպես էլ վերամշակված ձեւով՝ ներառյալ թարգմանության, դաշնակման եւ այլն, օգտագործելու համար:
4.Ստեղծագործությունն օգտագործելու յուրաքանչյուր եղանակի համար պահանջվում է իրավատիրոջ հատուկ թույլտվություն (1105 հոդվածի 2-րդ կետ):

*Հոդված 1126.* Կերպարվեստի ստեղծագործության հեղինակի հատուկ իրավունքը
1.Կերպարվեստի ստեղծագործության հեղինակն իրավունք ունի ստեղծագործության բնօրինակի կամ օրինակի սեփականատիրոջից պահանջելու վերարտադրման կամ վերամշակման իր իրավունքն իրագործելու հնարավորություն ընձեռել իրեն, եթե դրանով չեն վնասվում սեփականատիրոջ օրինական շահերը: Ընդ որում, սեփականատերը պարտավոր չէ ստեղծագործությունը հասցնել հեղինակի գտնվելու վայրը: Նշված հնարավորությունն ընձեռելիս սեփականատերը կարող է հեղինակից պահանջել ստեղծագործության բնօրինակի կամ օրինակի շուկայական գնի չափով գրավի կամ այլ միջոցի ապահովում:
Նշված իրավունքից օգտվելու համար անհրաժեշտ ծախսերը հոգում է հեղինակը, որը պատասխանատվություն է կրում նաեւ ստեղծագործության բնօրինակին կամ օրինակին պատճառած որեւէ վնասի համար:
2.Կերպարվեստի ստեղծագործության հեղինակն օգտվում է իր կողմից օտարված կերպարվեստի ստեղծագործության բնօրինակը սեփականատիրոջ կողմից կամ աճուրդասրահի, պատկերասրահի, գեղարվեստական սրահի, խանութի եւ այլ գործակալի միջոցով վաճառքի մասին տեղեկացվելու եւ յուրաքանչյուր վերավաճառքի գնի հինգ տոկոսը վաճառողից ստանալու անօտարելի իրավունքից (վերավաճառքից վարձատրություն ստանալու իրավունք):
(1126-րդ հոդվածը փոփ. 15.06.06 ՀՕ-143-Ն օրենք)

*Հոդված 1127.* Գույքային իրավունքների սահմանափակումները
1.Գույքային իրավունքների սահմանափակումները կիրառվում են պայմանով, եթե դրանք անհարկի վնաս չեն պատճառում ստեղծագործության բնականոն օգտագործմանը եւ չեն ոտնահարում հեղինակի օրինական շահերը:
2.Ստեղծագործությունն օգտագործելու հեղինակի եւ այլ անձանց գույքային իրավունքների սահմանափակում թույլատրվում է միայն օրենքով նախատեսված դեպքերում:
(1127-րդ հոդվածը փոփ. 15.06.06 ՀՕ-143-Ն օրենք)

*Հոդված 1128.* Ծառայողական ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը

1. (1128-րդ հոդվածի 1-ին կետն ուժը կորցրել է 15.06.06 ՀՕ-143-Ն օրենք)

2.Գործատուի ծառայողական հանձնարարությունների կամ ծառայողական պարտականությունների կատարման կարգով աշխատողի կողմից ստեղծագործության ստեղծման դեպքում գործատուն համարվում է այդ ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքների իրավատերը, եթե հեղինակի եւ գործատուի միջեւ կնքված պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Հեղինակի եւ գործատուի միջեւ կնքված պայմանագիրը հեղինակի համար կարող է նախատեսել վարձատրություն ծառայողական ստեղծագործության օգտագործման յուրաքանչյուր ձեւի համար, դրա հաշվարկման ու վճարման կարգը եւ պարունակել ստեղծագործության օգտագործման այլ պայմաններ:

3.Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում ծառայողական հանձնարարությունների կամ պարտականությունների կատարման կարգով ստեղծված հանրագիտարանների, հանրագիտարանային բառարանների, գիտական աշխատությունների, պարբերական ու շարունակական ժողովածուների, թերթերի, ամսագրերի եւ այլ պարբերական հրատարակությունների վրա:

(1128-րդ հոդվածը փոփ. 04.12.01 ՀՕ-270, 15.06.06 ՀՕ-143-Ն օրենքներ)

*Հոդված 1129.* Հեղինակային իրավունքի գործողությունը Հայաստանի Հանրապետության տարածքում

1.Սույն օրենքի դրույթները կիրառվում են այն հեղինակների ստեղծագործությունների եւ կատարողների կատարումների նկատմամբ, ովքեր Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են, անկախ տվյալ ստեղծագործության ստեղծման կամ հրապարակման վայրից:

2.Սույն օրենքի դրույթները կիրառվում են այն հեղինակների ստեղծագործությունների կամ կատարողների կատարումների նկատմամբ, ովքեր Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ չեն, սակայն նրանց ստեղծագործությունները կամ կատարումները առաջին անգամ լույս են ընծայվել Հայաստանի Հանրապետությունում, եթե հեղինակը կամ կատարողը Հայաստանի Հանրապետության տարածքում մշտապես բնակվող անձ է:

Ստեղծագործությունը Հայաստանի Հանրապետության տարածքում առաջին անգամ լույս ընծայված է համարվում նաեւ, եթե առաջին անգամ այլ պետության տարածքում լույս ընծայվելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, լույս է ընծայվում Հայաստանի Հանրապետության տարածքում:

3.Սույն օրենքի դրույթները կիրառվում են նաեւ հնչյունագրերի նկատմամբ, որոնց արտադրողները Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են կամ Հայաստանի Հանրապետության տարածքում մշտապես բնակվող անձինք: Օտարերկրյա հնչյունագիր արտադրողի հնչյունագրերի նկատմամբ կիրառվում են սույն հոդվածի 2-րդ կետի դրույթները:

4.Սույն հոդվածի 3-րդ կետի դրույթները համապատասխանաբար կիրառվում են ֆիլմերի, ռադիոհեռուստատեսային հաղորդումների, նախկինում չհրապարակված ստեղծագործությունների հրատարակությունների, ինչպես նաեւ տվյալների բազաների նկատմամբ:

(1129-րդ հոդվածը փոփ. 15.06.06 ՀՕ-143-Ն օրենք)

*Հոդված 1130*. Հեղինակային իրավունքի գործողության սկիզբը

1.Ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքն սկսում է գործել ստեղծագործությանը երրորդ անձանց կողմից ընկալվելու համար մատչելի օբյեկտիվ ձեւ տալու պահից՝ անկախ դրա լույս ընծայումից: Բանավոր ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը գործում է այն երրորդ անձանց հաղորդելու պահից:

2.Եթե ստեղծագործության վրա չի տարածվում սույն օրենսգրքի 1129 հոդվածի գործողությունը, ապա նման ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը պահպանվում է ստեղծագործության առաջին հրապարակման պահից, եթե դա իրականացվել է Հայաստանի Հանրապետությունում:

*Հոդված 1131.* Գույքային իրավունքների գործողության ժամկետը

1.Հեղինակի գույքային իրավունքները գործում են հեղինակի կյանքի ընթացքում եւ շարունակում են գործել նրա մահից հետո՝ 70 տարի:

2.Համահեղինակությամբ ստեղծված ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները գործում են համահեղինակների կյանքի ընթացքում եւ շարունակում են գործել համահեղինակներից վերջինի մահից հետո՝ 70 տարի:

3.Կեղծանվամբ կամ անանուն ստեղծագործությունների դեպքում հեղինակի գույքային իրավունքները ծագում են ստեղծագործությունն օրինական ճանապարհով հանրությանը մատչելի դառնալու պահից եւ գործում են 70 տարի: Եթե նշված ժամկետում կեղծանվամբ կամ անանուն ստեղծագործության հեղինակի անձը բացահայտվում է, ապա կիրառվում են սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետները:

4.Սույն հոդվածով սահմանված ժամկետները հաշվարկվում են համապատասխան նշված իրադարձությանը հաջորդող տարվա հունվարի մեկից:

(1131-րդ հոդվածը փոփ. 07.02.00 ՀՕ-29, 15.06.06 ՀՕ-143-Ն օրենքներ)

*Հոդված 1132.* Ստեղծագործությունը հանրային սեփականության վերածելը

1.Ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքների գործողության ժամկետի ավարտից հետո այն վերածվում է հանրային սեփականության:

Այն ստեղծագործությունները, որոնք Հայաստանի Հանրապետության տարածքում երբեւիցե պահպանության չեն տրամադրվել, համարվում են հանրային սեփականություն:

2.Հանրային սեփականություն համարվող ստեղծագործությունները կարող է ազատ օգտագործել յուրաքանչյուր անձ՝ առանց հեղինակային վարձատրություն վճարելու: Ընդ որում, պետք է պահպանվեն հեղինակության իրավունքը, անվան իրավունքը եւ հեղինակի համբավի եւ արժանապատվության իրավունքը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

(1132 հոդվածը փոփ. 07.02.00 ՀՕ-29, 04.12.01 ՀՕ-270, 15.06.06 ՀՕ-143-Ն օրենքներ)

*Հոդված 1133.* Հեղինակային իրավունքի անցումը ժառանգաբար եւ փոխանցումը

1. Հեղինակային իրավունքը փոխանցվում է ժառանգաբար:

2.Ժառանգաբար չեն փոխանցվում հեղինակության իրավունքը, անվան իրավունքը, համբավի եւ արժանապատվության իրավունքը, հետևանքի իրավունքը:

3.Հեղինակի ժառանգները իրավասու են իրականացնելու հեղինակության իրավունքի, անվան իրավունքի, համբավի եւ արժանապատվության իրավունքի պաշտպանությունը՝ առանց ժամկետային սահմանափակման:

Ժառանգների բացակայության դեպքում նշված իրավունքների պաշտպանությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմինը:

4.Հեղինակի գույքային իրավունքները կարող են պայմանագրով փոխանցվել (զիջվել) այլ անձի՝ վերջինիս եւ հեղինակի, նրա ժառանգների կամ նրանց հետագա իրավահաջորդների հետ կնքած պայմանագրով:

5.Գույքային իրավունքները կարող են իրավատեր իրավաբանական անձի վերակազմակերպման հետեւանքով փոխանցվել այլ անձի:

(1133-րդ հոդվածը փոփ. 15.06.06 ՀՕ-143-Ն օրենք)

*Հոդված 1134.* Ստեղծագործության օգտագործման թույլտվությունը: հեղինակային պայմանագիրը

1.Այլ անձինք ստեղծագործությունը կարող են օգտագործել միայն ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները կրող անձի (ստեղծագործության հեղինակ կամ այլ անձ, որին այդ իրավունքներն անցել են օրենքով սահմանված կարգով, այսուհետ՝ իրավատեր) թույլտվությամբ՝ հեղինակային պայմանագրի հիման վրա, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

2.Հեղինակային պայմանագիրը, որը կարգավորում է իրավատիրոջ եւ ստեղծագործության օգտագործման թույլտվություն ստացած անձի (այսուհետ՝ օգտագործող) փոխհարաբերությունները, հատուցելի է եւ կարող է լինել բացառիկ կամ ոչ բացառիկ:

3.Հեղինակային ոչ բացառիկ պայմանագրով իրավատերն օգտագործողին տրամադրում է ստեղծագործությունը որոշակի ժամկետում ու պայմանագրում նշված սահմաններում

օգտագործելու իրավունք՝ պահպանելով ստեղծագործության նկատմամբ բացառիկ իրավունքները, այդ թվում՝ այլ անձանց ստեղծագործության օգտագործման թույլտվություն տալու իրավունքը:

4.Հեղինակային բացառիկ պայմանագրով իրավատերն օգտագործողին է փոխանցում ստեղծագործությունը որոշակի ժամկետում ու սահմաններում օգտագործելու բացառիկ իրավունքը՝ պահպանելով ստեղծագործության օգտագործման իրավունքն այն մասով, որը նախատեսված է պայմանագրով: Այս դեպքում այլ անձանց կողմից ստեղծագործության օգտագործումն արգելելու իրավունքը կարող է իրականացնել իրավատերը, եթե դա չի կատարում օգտագործողը:

5.Հեղինակային պայմանագրով փոխանցված իրավունքները համարվում են ոչ բացառիկ, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

6.Ապագայում ստեղծագործություն ստեղծելու հեղինակի իրավունքները սահմանափակող պայմանագրի պայմաններն առ ոչինչ են:

7.Հեղինակային պայմանագրի առարկա չեն կարող լինել պայմանագիրը կնքելու պահին անհայտ ստեղծագործության օգտագործման իրավունքները:

(1134-րդ հոդվածը փոփ. 15.06.06 ՀՕ-143-Ն օրենք)

*Հոդված 1135.* Հեղինակային պայմանագրի պայմանները եւ ձեւերը

1.Հեղինակային պայմանագրում նշվում են փոխանցվող իրավունքների ծավալը, ստեղծագործությունն օգտագործելու եղանակները, օգտագործման իրավունքի փոխանցման ժամկետն ու վարձատրության չափը, վարձատրության չափի որոշման կարգը, վճարման ժամկետն ու կարգը, ինչպես նաեւ այլ պայմաններ, որոնք կողմերը կհամարեն էական:

2.Հեղինակային պայմանագրում վարձատրությունը որոշվում է որպես ստեղծագործության համապատասխան օգտագործումից ստացված եկամտի տոկոս, իսկ ստեղծագործության բնույթով պայմանավորված դրա անհնարինության դեպքում՝ պայմանագրում ամրագրված որոշակի գումարի տեսքով կամ կողմերի համար ընդունելի այլ եղանակով:

Հեղինակային վարձատրության նվազագույն դրույքաչափերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3.Հեղինակային պայմանագրում տարածքի վերաբերյալ (որի սահմաններում գործում է ստեղծագործության օգտագործման իրավունքը) պայմանի բացակայության դեպքում պայմանագրի գործողությունը սահմանափակվում է Հայաստանի Հանրապետության տարածքով:

4.Հեղինակային պայմանագրով չնախատեսված մնացած բոլոր իրավունքները պահպանվում են հօգուտ իրավատիրոջ:

5.Հեղինակային պայմանագիրը գործում է այդ պայմանագրում նշված ժամկետում, սակայն դադարում է գույքային իրավունքների գործողության ժամկետը լրանալու պահից: Լիցենզային պայմանագրում ժամկետի պայմանի բացակայության դեպքում դրա գործողության սահմանված ժամկետ համարվում է հինգ տարին:

6.Պայմանագրի յուրաքանչյուր կողմ կարող է հեղինակային պայմանագրով փոխանցված իրավունքները լրիվ կամ մասնակիորեն փոխանցել այլ անձանց՝ միայն պայմանագրով ուղղակի նախատեսված լինելու դեպքում:

7.Հեղինակային պայմանագրի պայմանները, որոնք հակասում են սույն օրենքի դրույթներին կամ սահմանափակում են որոշակի բնագավառում կամ որոշակի տեսակի ստեղծագործություն ապագայում ստեղծելու հեղինակի իրավունքները, առ ոչինչ են:

8.Հեղինակային պայմանագիրը կնքվում է գրավոր:

(1135-րդ հոդվածը փոփ. 15.06.06 ՀՕ-143-Ն օրենք)

*Հոդված 1136.* Հեղինակային պայմանագրով պատասխանատվությունը

1.Հեղինակային պայմանագրով պարտավորությունները չկատարած կամ անպատշաճ կատարած կողմը պարտավոր է հատուցել մյուս կողմին պատճառված վնասները՝ ներառյալ բաց թողնված օգուտը:

2.Եթե հեղինակը պատվիրված ստեղծագործությունը չի ներկայացրել պատվերի պայմանագրի պայմաններին համապատասխան, ապա նա պարտավոր է հատուցել պատվիրատուին պատճառված իրական վնասը:

*Հոդված 1137.* Պատասխանատվությունը ստեղծագործությունն առանց թույլտվության օգտագործելու համար

1.Առանց իրավատիրոջ թույլտվության՝ ստեղծագործությունն օգտագործող անձը պարտավոր է իրավատիրոջը հատուցել նրա կրած վնասները:

2.Իրավատիրոջ պահանջով նրան կարող է վճարվել՝

ա)հոնորարի կամ վարձատրության կրկնակի չափով փոխհատուցում, որը իրավատերը կստանար, եթե իրավախախտողը թույլտվություն ունենար հեղինակային իրավունքի օբյեկտի օգտագործման համար, կամ՝

բ)խախտման հետեւանքով պատճառած փաստացի վնասին համարժեք հատուցում, ներառյալ՝ բաց թողնված օգուտը:

(1137-րդ հոդվածը փոփ. 15.06.06 ՀՕ-143-Ն օրենք)

*Հոդված 1138.* Հեղինակային հարաբերությունների իրավական կարգավորումը

Հեղինակային հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով եւ "Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով:

Սույն գլխով չկարգավորված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է "Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքը:

## ԳԼՈՒԽ 64. ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

*Հոդված 1139.* Հարակից իրավունքների օբյեկտները

Հարակից իրավունքները տարածվում են կատարումների, հնչյունագրերի, ֆիլմերի ամրագրումների, հեռարձակող կազմակերպությունների հաղորդումների, տվյալների բազաների պարունակության, հրատարակչական ձեւավորումների վրա:

Հարակից իրավունքների ծագման եւ իրականացման համար որեւէ ձեւականություն չի պահանջվում:

(1139-րդ հոդվածը փոփ. 07.02.00 ՀՕ-29, 15.06.06 ՀՕ-143-Ն օրենքներ)

*Հոդված 1140.* Հարակից իրավունքների սուբյեկտները

1. Հարակից իրավունքների սուբյեկտներ են կատարողները, հնչյունագիր արտադրողները, ֆիլմի առաջին ամրագրման արտադրողները, հեռարձակող կազմակերպությունները, տվյալների բազաներ պատրաստողները եւ հրատարակիչները:

2.Կատարման նկատմամբ իրավունքը պատկանում է կատարողին:

3.Հնչյունագրի նկատմամբ իրավունքը պատկանում է հնչյունագիր արտադրողին:

4.Ֆիլմի ամրագրման նկատմամբ իրավունքը պատկանում է ֆիլմի առաջին ամրագրման արտադրողին:

5.Հեռարձակող կազմակերպության հաղորդման նկատմամբ իրավունքը պատկանում է տվյալ հեռարձակող կազմակերպությանը:

6.Տվյալների բազայի պարունակության նկատմամբ իրավունքը պատկանում է տվյալների բազան պատրաստողին:

7.Հրատարակչական ձեւավորման նկատմամբ իրավունքը պատկանում է հրատարակչին:

8.Սույն հոդվածի 2-7-րդ կետերում նշված իրավունքները կարող են ժառանգաբար համապարփակ իրավահաջորդության կարգով կամ իրավատեր իրավաբանական անձի վերակազմակերպման իրավունքով կամ պայմանագրով անցնել այլ անձի:

(1140-րդ հոդվածը փոփ. 07.02.00 ՀՕ-29, 15.06.06 ՀՕ-143-Ն օրենքներ)

*Հոդված 1141.* Հնչյունագիր արտադրողի իրավունքների պահպանության նշանը

Հնչյունագիր արտադրողների հարակից իրավունքների մասին ծանուցելու նպատակով ամրագրման կրիչի յուրաքանչյուր օրինակի կամ դա պարունակող տուփի վրա կարող է դրվել հարակից իրավունքների պահպանության նշանը, որը կազմված է՝

1) շրջանագծի մեջ վերցված լատինական "P" տառից.

2) հարակից իրավունքների իրավատիրոջ անունից կամ անվանումից.

3) հնչյունագրի առաջին լույսընծայման տարեթվից:

(1141-րդ հոդվածը փոփ. 07.02.00 ՀՕ-29, 15.06.06 ՀՕ-143-Ն օրենքներ)

*Հոդված 1142.* Հարակից իրավունքների գործողության ժամկետը

1.Կատարողի գույքային իրավունքները ծագում են կատարման պահից եւ գործում են 50 տարի: Եթե այդ ժամանակահատվածում կատարման ամրագրումն օրինական ճանապարհով լույս է ընծայվել կամ հանրությանը մատչելի է դարձել, ապա կատարողի իրավունքները ծագում են առաջին այդպիսի լույսընծայման կամ առաջին անգամ հանրությանը մատչելի դառնալու պահից (որն ավելի շուտ է տեղի ունեցել) եւ գործում են 50 տարի:

2.Հնչյունագիր արտադրողի գույքային իրավունքները ծագում են ամրագրման պահից եւ գործում են 50 տարի: Եթե այդ ժամանակահատվածում հնչյունագիրն օրինական ճանապարհով լույս է ընծայվել կամ հանրությանը մատչելի է դարձել, ապա հնչյունագիր արտադրողի իրավունքները ծագում են առաջին այդպիսի լույսընծայման կամ առաջին անգամ հանրությանը մատչելի դառնալու պահից (որն ավելի շուտ է տեղի ունեցել) եւ գործում են 50 տարի:

3.Ֆիլմի առաջին ամրագրման արտադրողի գույքային իրավունքները ծագում են ամրագրման պահից եւ գործում են 50 տարի: Եթե այդ ժամանակահատվածում ֆիլմն օրինական ճանապարհով լույս է ընծայվել կամ հանրությանը մատչելի դարձել, ապա ֆիլմ արտադրողի իրավունքները ծագում են առաջին այդպիսի լույսընծայման կամ առաջին անգամ հանրությանը մատչելի դառնալու պահից (որն ավելի շուտ է տեղի ունեցել) եւ գործում են 50 տարի:

4.Հաղորդման նկատմամբ հեռարձակող կազմակերպության գույքային իրավունքները ծագում են առաջին հեռարձակման պահից եւ գործում են 50 տարի:

5.Հրատարակչի իրավունքը ծագում է ստեղծագործության հրատարակման պահից եւ գործում է 50 տարի:

6.Տվյալների բազա պատրաստողի իրավունքները ծագում են տվյալների բազայի պատրաստումն ավարտելու պահից եւ գործում են 15 տարի:

Եթե մինչեւ նշված ժամկետի ավարտը տվյալների բազան որեւէ եղանակով մատչելի է դարձել հանրությանը, ապա տվյալների բազա պատրաստողի գույքային իրավունքների պահպանության ժամկետը հաշվարկվում է տվյալների բազան առաջին անգամ հանրությանը մատչելի դառնալու պահից:

7.Սույն հոդվածով սահմանված ժամկետները հաշվարկվում են համապատասխան նշված իրադարձությանը հաջորդող տարվա հունվարի մեկից:

(1142-րդ հոդվածը փոփ. 07.02.00 ՀՕ-29, 15.06.06 ՀՕ-143-Ն օրենքներ)

*Հոդված 1143.* Հարակից իրավունքներով հարաբերությունների իրավական կարգավորումը

Հարակից իրավունքներով հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով եւ "Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով:

Սույն գլխով չկարգավորված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է "Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքը:

(1143-րդ հոդվածը փոփ. 15.06.06 ՀՕ-143-Ն օրենք)

## ԳԼՈՒԽ 65. ԳՅՈՒՏԻ, ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼԻ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔ

*Հոդված 1144.* Գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի իրավական պահպանության պայմանները

1.Գյուտի, օգտակար մոդելի եւ արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքները պահպանվում են, եթե տրվել է արտոնագիր:

2. Իրավական պահպանություն տրամադրվում է արդյունաբերության մեջ կիրառելի՝

1) նոր, գյուտարարական մակարդակ ունեցող գյուտին.

2) արտադրության միջոցների եւ սպառման առարկաների կառուցվածքային կատարում համարված օգտակար մոդելին.

3)արտադրանքի արտաքին տեսքը բնորոշող եւ նոր, ինքնատիպ ու գեղարվեստակառուցվածքային լուծում համարված արդյունաբերական նմուշին:

3.Գյուտին, օգտակար մոդելին, արդյունաբերական նմուշին ներկայացվող պահանջները, որոնց դեպքում ծագում է արտոնագիր ստանալու իրավունքը, ինչպես նաեւ լիազոր մարմնի կողմից արտոնագիր տալու կարգը սահմանվում են "Արտոնագրերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով:

Գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի իրավական պահպանության հետ կապված եւ սույն գլխով չկարգավորված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է "Արտոնագրերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքը:

(1144 հոդվածը փոփ. 07.02.00 ՀՕ-29, 24.11.04 ՀՕ-141-Ն, 15.06.06 ՀՕ-143-Ն օրենքներ)

***Հոդված 1145.*** Գյուտը, օգտակար մոդելը, արդյունաբերական նմուշն օգտագործելու իրավունքը

1.Արտոնագրով պաշտպանված գյուտը, օգտակար մոդելը, արդյունաբերական նմուշն իր հայեցողությամբ օգտագործելու բացառիկ իրավունքը պատկանում է արտոնագրի տիրոջը:

2.Առանց արտոնագրի տիրոջ թույլտվության այլ անձինք իրավունք չունեն օգտագործել գյուտը, օգտակար մոդելը, արդյունաբերական նմուշը, բացառությամբ այն դեպքերի, երբ նման օգտագործումը` "Արտոնագրերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան` արտոնագրի տիրոջ իրավունքների խախտում չէ:

***Հոդված 1146.*** Արտոնագրի նկատմամբ իրավունքը տնօրինելը

Արտոնագիր ստանալու իրավունքը, հայտի գրանցումից բխող իրավունքները, արտոնագրի տիրապետման իրավունքը եւ արտոնագրից բխող իրավունքները կարող են լրիվ կամ մասնակի փոխանցվել այլ անձի:

***Հոդված 1147.*** Գյուտի, օգտակար մոդելի եւ արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքները

1.Գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի հեղինակին են պատկանում գյուտի, օգտակար մոդելի ու արդյունաբերական նմուշի նկատմամբ հեղինակության իրավունքը, ինչպես նաեւ գյուտը, օգտակար մոդելը, արդյունաբերական նմուշն անվանակոչելու իրավունքը:

2.Գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի նկատմամբ հեղինակության իրավունքը եւ այլ անձնական իրավունքները ծագում են արտոնագրի վրա հիմնված իրավունքները ծագելու պահից:

3. Որպես գյուտի, օգտակար մոդելի եւ արդյունաբերական նմուշի հեղինակ հայտում նշված անձը հեղինակ է համարվում, եթե այլ բան ապացուցված չէ:

***Հոդված 1148.*** Գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի համահեղինակները

1.Գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի համահեղինակների փոխհարաբերությունները սահմանվում են նրանց համաձայնությամբ:

2.Գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի ստեղծմանը ցուցաբերված ոչ ստեղծագործական բնույթի աջակցությունը (տեխնիկական կամ կազմակերպչական օգնություն, իրավունքների ձեւակերպմանն օժանդակել եւ այլն) չի հանգեցնում համահեղինակության:

***Հոդված 1149.*** Ծառայողական գյուտերը, օգտակար մոդելները, արդյունաբերական նմուշները

Ծառայողական պարտականությունների կամ գործատուի առաջադրանքը կատարելու ժամանակ աշխատողի ստեղծած գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի (ծառայողական գյուտի) արտոնագիր ստանալու իրավունքը պատկանում է գործատուին, եթե դա նախատեսված է նրանց միջեւ կնքված պայմանագրով:

***Հոդված 1150.*** Ծառայողական գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի հեղինակի վարձատրության իրավունքը

Ծառայողական գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի հեղինակի վարձատրության չափը, պայմանները եւ վճարելու կարգը որոշվում են հեղինակի ու գործատուի համաձայնությամբ, իսկ դրա բացակայության դեպքում` դատարանի վճռով:

*Հոդված 1151.* Արտոնագրի գործողությունը Հայաստանի Հանրապետության տարածքում

1.Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են Հայաստանի Հանրապետության լիազոր մարմնի կողմից տրված` գյուտի, օգտակար մոդելի եւ արդյունաբերական նմուշի արտոնագրերը:

2.Օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության տված արտոնագրերը Հայաստանի Հանրապետության տարածքում գործում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում:

3.Օտարերկրյա քաղաքացիները եւ իրավաբանական անձինք կամ նրանց իրավահաջորդները Հայաստանի Հանրապետությունում իրավունք ունեն ստանալ գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի արտոնագրեր, եթե սահմանված կարգով հայտարկված լուծումը համապատասխանում է "Արտոնագրերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով` գյուտերին, օգտակար մոդելներին կամ արդյունաբերական նմուշներին ներկայացվող պահանջներին:

(1151 հոդվածը փոփ. 24.11.04 ՀՕ-141-Ն օրենք)

*Հոդված 1152.* Արտոնագրի գործողության ժամկետը

Արտոնագրի գործողության ժամկետը սահմանվում է "Արտոնագրերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով:

*Հոդված 1153.* Արտոնագրի նկատմամբ իրավունքը փոխանցելու պայմանագիջ ձեւը եւ դրանից ծագող իրավունքների գրանցումը

1.Արտոնագրի զիջման մասին պայմանագիրը պետք է կնքվի գրավոր, իսկ պայմանագրից ծագող իրավունքները գրանցվում են լիազոր մարմնում:

2.Գրավոր ձեւը կամ գրանցման պահանջը չպահպանելը հանգեցնում է պայմանագրի անվավերության:

(1153 հոդվածը փոփ. 24.11.04 ՀՕ-141-Ն օրենք)

*Հոդված 1154.* Լիցենզային եւ ենթալիցենզային պայմանագրերի ձեւը եւ դրանցից ծագող իրավունքների գրանցումը

1.Լիցենզային եւ ենթալիցենզային պայմանագրերը կնքվում են գրավոր, իսկ այդ պայմանագրերից ծագող իրավունքները գրանցվում են լիազոր մարմնում:

2.Գրավոր ձեւը կամ գրանցման պահանջը չպահպանելը հանգեցնում է պայմանագրի անվավերության:

(1154 հոդվածը փոփ. 24.11.04 ՀՕ-141-Ն օրենք)

*Հոդված 1155.* Պատասխանատվությունն արտոնագիրը խախտելու համար

Արտոնագրի տիրոջ պահանջով արտոնագրի խախտումը պետք է դադարեցվի, իսկ իրավախախտողը պարտավոր է արտոնագրի տիրոջը հատուցել կրած վնասները:

*Հոդված 1156.* Արտոնագրի տիրոջ իրավունքների սահմանափակումը

Արտոնագրի տիրոջ իրավունքները սահմանափակելու հիմքերը, արտոնագիրը դադարեցնելու (չեղյալ հայտարարելու), այն անվավեր ճանաչելու, հարկադրական լիցենզիաներ տալու պայմանները սահմանվում են "Արտոնագրերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով:

Արտոնագիրը հասարակության եւ պետության կարիքների համար կարող է օտարվել միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված դեպքերում եւ օրենքով սահմանված կարգով:

(1156-րդ հոդվածը փոփ. 27.11.06 ՀՕ-187-Ն օրենք)

ԳԼՈՒԽ 66. ԲՈՒՅՍԵՐԻ ՆՈՐ ՍՈՐՏԵՐԻ ԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՆՈՐ ՑԵՂԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

*Հոդված 1157.* Բույսերի նոր սորտերի եւ կենդանիների նոր ցեղերի նկատմամբ իրավունքների պահպանության պայմանները

1. Բույսերի նոր սորտերի եւ կենդանիների նոր ցեղերի (սելեկցիոն նվաճումների) նկատմամբ իրավունքները պահպանվում են, եթե տրվել է արտոնագիր:

2.Բուսաբուծության մեջ սելեկցիոն նվաճում է համարվում արհեստական ճանապարհով կամ ընտրության միջոցով ստացված եւ գոյություն ունեցող բույսի սորտերից մեկ կամ մի քանի տարբերակիչ տնտեսական հատկանիշներ ունեցող բույսի սորտը:

3.Անասնաբուծության մեջ սելեկցիոն նվաճում է համարվում մարդու կողմից ստեղծված եւ ծննդաբանական կառուցվածքով ու այն նույն կենդանիների ցեղի կենդանիներից տարբերելու եւ կենդանիների մեկ ցեղի ձեւով բազմանալու համար քանակապես բավարար հատկություններով օժտված կենդանիների ցեղը, այսինքն՝ ընդհանուր ծագում ունեցող կենդանիների բազմանդամ խումբը:

4.Պահանջները, որոնցով պայմանավորված է արտոնագիր ստանալու իրավունքի ծագումը եւ սելեկցիոն նվաճումների արտոնագիր տալու կարգը, սահմանվում են օրենքով:

5.Սելեկցիոն նվաճումների նկատմամբ իրավունքների եւ այդ իրավունքների պահպանության հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 1146-1151, 1153-1156 հոդվածների կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ սույն գլխի կանոններով եւ "Սելեկցիոն նվաճումների պաշտպանության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով: Այդ դեպքում լիազոր մարմնի իրավունքները եւ պարտականություններն իրականացնում է այն պետական մարմինը, որի վրա դրված է սելեկցիոն նվաճումների փորձարկումը եւ պահպանությունը:

(1157 հոդվածը փոփ. 07.02.00 ՀՕ-29, 24.11.04 ՀՕ-141-Ն օրենքներ)

*Հոդված 1158.* Սելեկցիոն նվաճումն անվանակոչելու հեղինակի իրավունքը

1.Սելեկցիոն նվաճման հեղինակն իրավունք ունի որոշել դրա անվանումը, որը պետք է համապատասխանի "Սելեկցիոն նվաճումների պաշտպանության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջներին:

2.Պահպանվող սելեկցիոն նվաճումների արտադրության, վերարտադրության, վաճառքի նպատակով առաջարկության, վաճառքի եւ վաճառահանման այլ տեսակների դեպքերում սելեկցիոն նվաճումների համար գրանցված անվանումների կիրառումը պարտադիր է: Արտադրված եւ (կամ) վաճառվող սերմերին, տոհմային նյութին գրանցվածից տարբեր անվանում շնորհել չի թույլատրվում:

3.Գրանցված սելեկցիոն նվաճման անվանումը դրան չվերաբերող արտադրված եւ (կամ) վաճառվող սերմերին եւ տոհմային նյութին շնորհելն արտոնագրի տիրոջ ու սելեկցիոների իրավունքների խախտում է:

*Հոդված 1159.* Սելեկցիոն նվաճման արտոնագրի տիրոջ իրավունքները

Սելեկցիոն նվաճման օգտագործման բացառիկ իրավունքը, "Սելեկցիոն նվաճումների պաշտպանության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված սահմաններում, պատկանում է սելեկցիոն նվաճման արտոնագրի տիրոջը:

*Հոդված 1160.* Սելեկցիոն նվաճման արտոնագրի տիրոջ պարտականությունները

Սելեկցիոն նվաճման արտոնագրի տերը պարտավոր է բույսերի համապատասխան սորտը կամ կենդանիների համապատասխան ցեղը պահպանել արտոնագրի գործողության ժամկետի ընթացքում այնպես, որպեսզի պահպանվեն բույսերի սորտի եւ կենդանիների ցեղի գրանցման ժամանակ կազմված նկարագրության մեջ նշված հատկանիշները:

*Հոդված 1161.* Սելեկցիոն նվաճման նկատմամբ արտոնագրի գործողության ժամկետը

Սելեկցիոն նվաճման նկատմամբ արտոնագրի գործողությունն սկսվում է պահպանվող սելեկցիոն նվաճումների պետական գրանցամատյանում նվաճումը գրանցելու եւ արտոնագիրը տալու օրվանից: Արտոնագրի գործողության ժամկետը սահմանվում է

"Սելեկցիոն նվաճումների պաշտպանության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով:

*Հոդված 1162.* Սելեկցիոն նվաճումներն օգտագործելու թույլտվությունը

1.Սելեկցիոն նվաճմանն իրավական պահպանություն տրամադրելը հիմք չէ դրա օգտագործման թույլտվության համար:

2.Օգտագործման թույլատրվող բույսերի սորտերի եւ կենդանիների ցեղերի տեսակների գրանցումը սելեկցիոն նվաճումների պետական գրանցամատյանում կատարում է սելեկցիոն նվաճումների փորձարկումները եւ պահպանություն իրականացնող պետական մարմինը՝ դրանց տնտեսական օգտակարության պետական փորձարկումների արդյունքների հիման վրա:

3.Բույսերի սորտերը եւ կենդանիների ցեղերն օգտագործելու թույլտվության հայտը ներկայացվում է սելեկցիոն նվաճումների փորձարկումներ եւ պահպանություն իրականացնող պետական մարմին:

(1162 հոդվածը փոփ. 07.02.00 ՀՕ-29 օրենք)

## ԳԼՈՒԽ 67. ԻՆՏԵԳՐԱԼ ՄԻԿՐՈՍԽԵՄԱՆԵՐԻ ՏՈՊՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔ

*Հոդված 1163.* Ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների նկատմամբ իրավունքների պահպանության պայմանները

1.Ինտեգրալ միկրոսխեմայի տոպոլոգիային իրավական պահպանություն է տրամադրվում դրա գրանցման հիման վրա: Ինտեգրալ միկրոսխեմայի տոպոլոգիայի գրանցումն իրականացնում է լիազոր մարմինը:

Գրանցման հիման վրա տրվում է ինտեգրալ միկրոսխեմայի տոպոլոգիայի գրանցման վկայագիր:

2.Ինտեգրալ միկրոսխեմայի տոպոլոգիայի գրանցման եւ վկայագիր տալու կարգն ու պայմանները սահմանվում են "Ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պաշտպանության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով:

3.Ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով եւ "Ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պաշտպանության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով:

Ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված եւ սույն գլխով չկարգավորված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է "Ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պաշտպանության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքը:

(1163-րդ հոդվածը փոփ. 25.09.02 ՀՕ-413-Ն, 24.11.04 ՀՕ-141-Ն, 15.06.06 ՀՕ-143-Ն օրենքներ)

## ԳԼՈՒԽ 68. ՉԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՊՕՐԻՆԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

*Հոդված 1164.* Չբացահայտված տեղեկատվության իրավական պահպանության պայմանները

1.Տեխնիկական, կազմակերպչական կամ առեւտրային տեղեկատվությունը՝ ներառյալ արտադրության գաղտնիքները (նոու-հաու), որոնք անհայտ են երրորդ անձանց (չբացահայտված տեղեկատվություն), օրինաչափ տիրապետող անձն իրավունք ունի այդ տեղեկատվությունը պահպանել ապօրինի օգտագործումից, եթե պահպանված են սույն օրենսգրքի 141 հոդվածի 1-ին կետով սահմանված պայմանները:

2.Չբացահայտված տեղեկատվությունն ապօրինի օգտագործումից պահպանելու իրավունքը ծագում է անկախ այդ տեղեկատվության նկատմամբ որեւէ ձեւականություն կատարելուց (գրանցելուց, վկայական ստանալուց եւ այլն):

3.Չբացահայտված տեղեկատվության պահպանության կանոնները չեն կիրառվում այն տեղեկությունների նկատմամբ, որոնք օրենքին համապատասխան չեն կարող լինել ծառայողական, առեւտրային կամ բանկային գաղտնիք (իրավաբանական անձանց, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին, պետական վիճակագրական հաշվետվության տեղեկությունները եւ այլն):

4.Չբացահայտված տեղեկատվության պահպանության իրավունքը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ պահպանվում են սույն օրենսգրքի 141 հոդվածի 1-ին կետով նախատեսված պայմանները:

*Հոդված 1165.* Պատասխանատվությունը չբացահայտված տեղեկատվության ապօրինի օգտագործման համար

1.Չբացահայտված տեղեկատվությունն ապօրինի հիմքերով ստացած, տարածած կամ օգտագործած անձը պարտավոր է այդ տեղեկատվության օրինական տիրոջը հատուցել դրա ապօրինի օգտագործմամբ պատճառված վնասները:

2.Եթե չբացահայտված տեղեկատվությունն ապօրինի օգտագործող անձն այն ստացել է տարածելու իրավունք չունեցող անձից, որի մասին չգիտեր եւ պարտավոր չէր իմանալ (բարեխիղճ ձեռք բերող), ապա չբացահայտված տեղեկատվության օրինական տիրապետողն իրավունք ունի բարեխիղճ ձեռք բերողից պահանջել չբացահայտված տեղեկատվության օգտագործմամբ պատճառված վնասների հատուցում, սկսած այն պահից հետո, երբ բարեխիղճ ձեռք բերողն իմացել է, որ դրա օգտագործումն ապօրինի է:

3.Չբացահայտված տեղեկատվությունն օրինաչափ տիրապետող անձն իրավունք ունի ապօրինի օգտագործողից պահանջել անհապաղ դադարեցնելու դրա օգտագործումը: Սակայն դատարանը, հաշվի առնելով չբացահայտված տեղեկատվության օգտագործման վրա բարեխիղճ ձեռք բերողի կատարած ծախսերը, կարող է դրա հետագա օգտագործումը թույլատրել հատուցելի ոչ բացառիկ լիցենզիայի պայմաններով:

4.Չբացահայտված տեղեկատվության բովանդակություն ունեցող տեղեկություններն ինքնուրույն եւ օրինաչափ ստացած անձն իրավունք ունի այդ տեղեկություններն օգտագործել՝ անկախ համապատասխան չբացահայտված տեղեկատվության տիրապետողի իրավունքներից ու վերջինիս հանդեպ պատասխանատվություն չի կրում դրա օգտագործման համար:

*Հոդված 1166.* Չբացահայտված տեղեկատվությունն ապօրինի օգտագործումից պահպանելու իրավունքը փոխանցելը

1.Չբացահայտված տեղեկատվությանը տիրապետող անձը կարող է այդ տեղեկատվության բովանդակությունը կազմող տեղեկություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն լիցենզային պայմանագրով հանձնել այլ անձի (հոդված 1106):

2.Լիցենզառուն պարտավոր է պատշաճ միջոցներ ձեռնարկել պայմանագրով ստացած տեղեկատվության գաղտնիության պահպանման համար եւ լիցենզատուին հավասար ունի երրորդ անձանց ապօրինի օգտագործումից այն պաշտպանելու իրավունք: Եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով, լիցենզառուն տեղեկատվության գաղտնիությունը պահպանելու պարտականությունը կրում է նաեւ լիցենզային պայմանագիրը դադարելուց հետո, եթե համապատասխան տեղեկությունները շարունակում են լինել չբացահայտված տեղեկատվություն:

## ԳԼՈՒԽ 69. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ, ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

### § 1. ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄ

*Հոդված 1167.* Ֆիրմային անվանման նկատմամբ իրավունքը

1.Իրավաբանական անձը բացառիկ իրավունք ունի իր ֆիրմային անվանումն օգտագործել ապրանքների, դրանց փաթեթավորման, գովազդի, ցուցանակների, հաշիվների, տպագիր

հրատարակումների, պաշտոնական ձեւաթղթերի եւ իր գործունեության հետ կապված այլ փաստաթղթերի վրա: Այդ իրավունքը գործում է նաեւ ապրանքները ցուցահանդեսներում եւ տոնավաճառներում ցուցադրելիս:

2.Իրավաբանական անձի ֆիրմային անվանումը որոշվում է նրա կանոնադրությունը հաստատելիս եւ գրանցվում է օրենքով սահմանված կարգով:

(1167 հոդվածը փոփ. 07.02.00 ՀՕ-29 օրենք)

*Հոդված 1168.* Իրավաբանական անձի ֆիրմային անվանումն ապրանքային նշանի վրա օգտագործելը

Իրավաբանական անձն իրավունք ունի իր ֆիրմային անվանումը օգտագործել իրեն պատկանող ապրանքային նշանի վրա:

*Հոդված 1169.* Ֆիրմային անվանման նկատմամբ իրավունքի գործողությունը

1.Որպես իրավաբանական անձի անվանում Հայաստանի Հանրապետությունում գրանցված ֆիրմային անվանման նկատմամբ բացառիկ իրավունքը գործում է Հայաստանի Հանրապետության տարածքում:

2.Օտարերկրյա պետությունում գրանցված կամ համընդհանուր ճանաչում ստացած անվանման նկատմամբ բացառիկ իրավունքը Հայաստանի Հանրապետության տարածքում գործում է օրենքով նախատեսված դեպքերում:

3.Ֆիրմային անվանման նկատմամբ իրավունքի գործողությունը դադարում է միայն իրավաբանական անձի լուծարման եւ նրա ֆիրմային անվանման փոփոխության դեպքերում:

*Հոդված 1170.* Ֆիրմային անվանման նկատմամբ իրավունքը փոխանցելը

Իրավաբանական անձի ֆիրմային անվանման նկատմամբ իրավունքը թույլատրվում է փոխանցել միայն նրա վերակազմակերպման դեպքում:

§ 2. ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆ

*Հոդված 1171.* Ապրանքային նշանի (սպասարկման նշանի) իրավական պահպանության պայմանները

1.Ապրանքային եւ սպասարկման նշանները (այսուհետ՝ ապրանքային նշան) այն նշաններն են, որոնցով որեւէ անձի ապրանքները եւ ծառայությունները համապատասխանաբար տարբերվում են այլ անձի նույնատիպ ապրանքներից եւ ծառայություններից:

2.Ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրվում է օրենքով սահմանված կարգով՝ դրա գրանցման հիման վրա կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան:

3.Ապրանքային նշանի գրանցման փաստը եւ դրա նկատմամբ իրավունքը հավաստվում է վկայագրով:

4.Ապրանքային նշանների տեսակները, որպես ապրանքային նշան չգրանցվող նշանները, ապրանքային նշանները գրանցելու, դրանց գրանցումը չեղյալ հայտարարելու եւ անվավեր ճանաչելու կարգը, ինչպես նաեւ չգրանցված ապրանքային նշաններին իրավական պահպանություն տրամադրելու դեպքերը սահմանվում են օրենքով:

Ապրանքային նշանների իրավական պահպանության հետ կապված եւ սույն պարագրաֆով չկարգավորված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է "Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքը:

(1171-րդ հոդվածը փոփ. 07.02.00 ՀՕ-29, խմբ. 25.09.02 ՀՕ-413-Ն, 15.06.06 ՀՕ-143-Ն օրենքներ)

*Հոդված 1172.* Ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքը եւ ապրանքային նշանի օգտագործումը

1.Ապրանքային նշանի սեփականատերը բացառիկ իրավունք ունի տիրապետելու, օգտագործելու եւ տնօրինելու ապրանքային նշանը, ինչպես նաեւ այլ անձանց թույլատրելու կամ արգելելու դրա օգտագործումը:

2.Գրանցված ապրանքային նշանի սեփականատերը բացառիկ իրավունք ունի երրորդ անձանց առեւտրային գործունեության ընթացքում արգելելու առանց իր թույլտվության ապրանքային նշանի կամ դրանով նշված ապրանքի պատրաստումը, կիրառումը, ներմուծումը, վաճառքը եւ դրա առաջարկը, ինչպես նաեւ այլ ձեւերով տնտեսական շրջանառության մեջ մտցնելը կամ այդ նշանով նշված ապրանքի կամ ապրանքային նշանի նույն նպատակով պահեստավորումը, եթե այդ ապրանքային նշանը նույնական կամ շփոթելու աստիճան նման է իր ապրանքային նշանին եւ օգտագործված է այն ապրանքների նկատմամբ`

1) որոնց համար գրանցված է իր ապրանքային նշանը.

2) որոնք նույնատիպ են այն ապրանքներին, որոնց համար գրանցված է իր ապրանքային նշանը:

3.Ապրանքային նշանի օգտագործում է համարվում դրա զետեղումն այն ապրանքների վրա, որոնց համար գրանցված է ապրանքային նշանը, եւ (կամ) դրանց փաթեթավորման վրա:

4.Ապրանքային նշանի օգտագործում է համարվում նաեւ դրա կիրառումը գովազդներում, հրատարակություններում, ինչպես նաեւ պաշտոնական ձեւաթղթերում, ցուցանակներում, Հայաստանի Հանրապետությունում կազմակերպվող ցուցահանդեսներում եւ տոնավաճառներում ցուցանմուշները ցուցադրելիս միայն այն դեպքերում, երբ ապրանքների եւ (կամ) դրանց փաթեթավորման վրա նշանի կիրառումն անհնար է:

(1172-րդ հոդվածը փոփ. 15.06.06 ՀO-143-Ն օրենք)

*Հոդված 1173.* Ապրանքային նշանի իրավական պահպանությունը Հայաստանի Հանրապետության տարածքում

Հայաստանի Հանրապետության տարածքում իրավական պահպանություն տրամադրվում է Հայաստանի Հանրապետության լիազոր մարմինը կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրի ուժով միջազգային կազմակերպության գրանցած ապրանքային նշանին:

(1173-րդ հոդվածը փոփ. 24.11.04 ՀO-141-Ն օրենք)

*Հոդված 1174.* Ապրանքային նշանը գրանցելու գործողության ժամկետը

Ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետը սահմանվում է "Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով:

*Հոդված 1175.* Ապրանքային նշանի նկատմամբ իրավունքը փոխանցելը

1.Վկայագրում նշված ապրանքների եւ ծառայությունների բոլոր տեսակների կամ դրանց մի մասի համար ապրանքային նշանի նկատմամբ իրավունքը նշանի սեփականատերը կարող է պայմանագրով փոխանցել այլ անձի:

2.Ապրանքային նշանի նկատմամբ իրավունքի փոխանցումը` ներառյալ պայմանագրով կամ իրավահաջորդության կարգով, պետք է գրանցվի լիազոր մարմնում:

(1175-րդ հոդվածը փոփ. 24.11.04 ՀO-141-Ն օրենք)

*Հոդված 1176.* Ապրանքային նշանն օգտագործելու թույլտվություն

1. Ապրանքային նշանի սեփականատերը կարող է լիցենզային պայմանագրով (հոդված 1106) վկայագրում նշված ապրանքների եւ ծառայությունների բոլոր տեսակների կամ դրանց մի մասի համար ապրանքային նշանն օգտագործելու իրավունքը տրամադրել այլ անձի:

2.Ապրանքային նշանն օգտագործելու լիցենզային պայմանագիրը պետք է պարունակի պայման, համաձայն որի լիցենզառուի ապրանքների կամ ծառայությունների որակը չպետք է զիջի լիցենզատուի ապրանքների կամ ծառայությունների որակին, եւ լիցենզատուն իրավունք ունի վերահսկել այդ պայմանի կատարումը:

3.Ապրանքային նշանի գրանցման գործողությունը դադարելիս դադարում է նաեւ լիցենզային պայմանագրի գործողությունը:

4.Ապրանքային նշանի նկատմամբ իրավունքն այլ անձի փոխանցելը հիմք չէ լիցենզային պայմանագիրը դադարելու համար:

*Հոդված 1177.* Ապրանքային նշանի նկատմամբ իրավունքը փոխանցելու կամ լիցենզիա տրամադրելու մասին պայմանագրերի ձեւը եւ դրանցից բխող իրավունքների փոխանցման գրանցումը

1.Ապրանքային նշանի նկատմամբ իրավունքը փոխանցելու կամ լիցենզիա տրամադրելու մասին պայմանագիրը պետք է կնքվի գրավոր, իսկ դրանցից բխող իրավունքների փոխանցումը պետք է գրանցվի լիազոր մարմնում:

2.Գրավոր ձեւը եւ գրանցման պահանջները չպահպանելը հանգեցնում է պայմանագրի անվավերության:

(1177-րդ հոդվածը փոփ. 24.11.04 ՀՕ-141-Ն օրենք)

*Հոդված 1178.* Պատասխանատվությունն ապրանքային նշանի նկատմամբ իրավունքը խախտելու համար

1.Ապրանքային նշանն ապօրինի օգտագործող անձը պարտավոր է դադարեցնել խախտումը եւ ապրանքային նշանի սեփականատիրոջը հատուցել պատճառած վնասները (հոդված 17):

2.Ապրանքային նշանն ապօրինի օգտագործող անձը պարտավոր է ոչնչացնել ապրանքային նշանի պատրաստված պատկերները, ապրանքի կամ դրա փաթեթավորման վրայից հանել ապօրինի օգտագործվող ապրանքային նշանը կամ դրան շփոթելու աստիճանի նման նշանը:

3.Սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջները կատարելու անհնարինության դեպքում համապատասխան ապրանքը ենթակա է ոչնչացման օրենքով սահմանված կարգով:

(1178 հոդվածը փոփ. 07.02.00 ՀՕ-29 օրենք)

§ 3. ԱՊՐԱՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՏԵՂԱՆՈՒՆԸ

(3 պարագրաֆի անվանումը խմբ. 25.09.02 ՀՕ-413-Ն օրենք)

*Հոդված 1179.* Ապրանքի ծագման տեղանվան իրավական պահպանությունը

1.Ապրանքի ծագման տեղանուն (ծագման տեղ) է համարվում երկրի, բնակավայրի, տեղանքի կամ աշխարհագրական այլ օբյեկտի անվանումը, որն օգտագործվում է այն ապրանքը նշելու համար, որի յուրահատկությունները բացառապես կամ գլխավորապես որոշվում են այդ աշխարհագրական օբյեկտին բնորոշ բնական պայմաններով կամ այլ գործոններով կամ բնական պայմանների եւ այլ գործոնների զուգորդմամբ:

Ապրանքի ծագման տեղանունը կարող է լինել աշխարհագրական օբյեկտի պատմական անվանումը:

2.Ապրանքի ծագման տեղանվանն իրավական պահպանություն է տրամադրվում դրա գրանցման հիման վրա: Ապրանքի ծագման տեղանունը գրանցում է լիազոր մարմինը:

Գրանցման հիման վրա տրվում է ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքի վկայագիր:

3. Վկայագիր տալու, գրանցումն ու վկայագրերն անվավեր ճանաչելու եւ դրանց գործողությունը դադարեցնելու կարգն ու պայմանները որոշվում են "Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով:

Ապրանքի ծագման տեղանվան իրավական պահպանության հետ կապված եւ սույն պարագրաֆով չկարգավորված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է "Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքը:

(1179-րդ հոդվածը փոփ. 24.11.04 ՀՕ-141-Ն, 15.06.06 ՀՕ-143-Ն օրենք)

*Հոդված 1180.* Ապրանքի ծագման տեղանունն օգտագործելու իրավունքը

Ապրանքի ծագման տեղանունն օգտագործելու իրավունք ունեցող անձը կարող է այդ անվանումը զետեղել ապրանքի, փաթեթավորման, գովազդի, ազդագրերի, հաշիվների վրա

կամ դա այլ կերպ օգտագործել՝ տվյալ ապրանքը քաղաքացիական շրջանառության մեջ մտցնելու կապակցությամբ:

*Հոդված 1181.* Ապրանքի ծագման տեղանվան իրավական պահպանության գործողության ոլորտը

1.Հայաստանի Հանրապետությունում իրավական պահպանություն է տրամադրվում Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող ապրանքների ծագման տեղանուններին:

2.Այլ պետությունում գտնվող ապրանքի ծագման տեղանվանը Հայաստանի Հանրապետությունում իրավական պահպանություն է տրամադրվում օրենքով նախատեսված դեպքերում:

*Հոդված 1182.* Ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքի վկայագրի գործողության ժամկետը

Ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքի վկայագրի գործողության ժամկետը սահմանվում է "Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով:

*Հոդված 1182.1.* Աշխարհագրական նշման իրավական պահպանությունը

1.Որպես աշխարհագրական նշում իրավական պահպանության ենթակա է այն նշանը, որն առեւտրային գործունեության մեջ օգտագործվում է որեւէ պետության տարածքից կամ այդ տարածքի որոշակի շրջանից կամ տեղանքից ծագող ապրանքը նույնականացնելու համար, եթե ապրանքի յուրահատուկ որակը, համբավը կամ այլ բնութագրերը հիմնականում վերագրվում են դրա աշխարհագրական ծագմանը:

2.Արգելվում է առեւտրային գործունեության ընթացքում աշխարհագրական նշումների օգտագործումն այն ապրանքների նկատմամբ, որոնք՝

1) չեն ծագել տվյալ աշխարհագրական տեղանքից.

2) ծագել են տվյալ աշխարհագրական տեղանքից, սակայն չեն համապատասխանում նորմատիվ փաստաթղթերով սահմանված պահանջներին:

3.Աշխարհագրական նշումը ենթակա չէ իրավական պահպանության, եթե առեւտրային գործունեության ընթացքում դարձել է ապրանքի ընդհանուր անվանում:

(1182.1 հոդվածը լրաց. 25.09.02 ՀՕ-413-Ն օրենք)

*Հոդված 1183.* Պատասխանատվությունն ապրանքի ծագման տեղանվան եւ աշխարհագրական նշման ապօրինի օգտագործման համար

Ապրանքի ծագման տեղանունը եւ աշխարհագրական նշումն օգտագործելու իրավունք ունեցող անձը, ինչպես նաեւ սպառողների իրավունքները պաշտպանող կազմակերպությունները կարող են այդ աշխարհագրական նշումը կամ տեղանունն ապօրինի օգտագործող անձից պահանջել դադարեցնելու դրա կամ դրան շփոթելու աստիճան նման նշանի օգտագործումը, ապրանքի, դրա փաթեթավորման, ձեւաթղթի եւ այլ փաստաթղթերի վրայից վերացնել այդպիսի նշանների պատկերը, իսկ եթե դա անհնար է, պահանջել օրենսդրությամբ սահմանված կարգով առգրավել եւ ոչնչացնել փաթեթը կամ ապրանքը:

(1183-րդ հոդվածը խմբ. 25.09.02 ՀՕ-413-Ն օրենք)